


ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Վ. Գ. ԽՂԵԶԼՅԱՆ

Հայանի ազգագրագետ-բանահավաք Սարգիս Հայկունին իր ողջ կյանքի ընթացքում անսպառ եռանդով զբի է առել իր ժամանակաշրջանի ժողովրդական կյանքն ու այն շրջապատող բնական-հասարակական սլայմանները: Ս. Հայկունու զբի առած նյութերը՝ հստակ սկսակերպում են տալիս քաղաքական, տնտեսական ու հոգևոր այն վիճակի մասին, որին ենթարկված էր արևմտահայությունը՝ սկսած Զեյթունի աղստամբությունից մինչև սուլթան համիդյան արյունոտ եղևներ:



Հայկունին իր ողջ իմաստասիր կյանքի ընթացքում, ստանդարտական հայի ցուպը ձեռքին, եղել է բաղմամբով տեղավայրերում, ամենուրեք ուսումնասիրել է բնակչության նիստ ու կացը, բնակել տվյալ վայրին հատուկ ու բնորոշը և, որպես ականատես վկայադիր, մանրամասն զբի է առել իր տեսածն ու լսածը՝ սկսած իր ծննդավայր Տրապիզոնից մինչև իր վերջին ուղևորությունը

Թալին ու Դրմզյու: Ծանաղարհորդությունների այս ամբողջ շղթան զարձել է Հայկունու տեղագրական, ազգագրական ու բանահյուսական գրվածքների բարտեղագրական այն հենքը, որի վրա նա վերարտադրել է հայ և ալլաղբի բնակչության քաղաքական, տնտեսական ու հոգևոր գոյավիճակը:

Սարգիս Հայկունին ծնվել է 1838 թ. Տրապիզոնի Զեֆանոս գյուղում, չքավոր գյուղացու բնտանիքում: Մանկուց որր ու անօգնական Հայկունին անպատմելի գծվարություններ հաղթահարելով 1857 թ. դնում է Տրապիզոն, որտեղ սկզբում աշակերտում է մի սղնձագործի, աղա աշխատանքի է անցնում

Վ. Ս. Հայկունու արխիվի մի ժառը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի, ինչպես և պատմության թանգարանում:

մաճառատանը: Այնտեղ նա հնարավորություն է ստանում երեկոները հաճախել տեղի ուսումնարանը՝ պայմանով որ ամեն օր մաքրի և սրբի դասարանները: Նրան հաճախ կարելի էր տեսնել Տրապիզոնում հիմնադրված Խորենյան բնթերցասրահում, որտեղ նա աշխատանքից հետո սովորում էր հայոց լեզվի բերականություն, կարդում դանազան գրքեր ու ամսագրեր՝ ընդլայնելով իր մտահորիզոնը. «Կարդալու վրա այնքան սեր ձգած էի, — գրում է նա, — կհիշեմ՝ չափ անգամ հորեղբայրս ճրագը կմտրել, ևս դուրսը լուսնկայի լույսով՝ դիրք կկաբգայի»²:

1860—70-ական թթ. Արևմտյան Հայաստանի տարրեր տեղեւորում ստեղծվում են մշակութային կազմակերպություններ, որոնք լայն աշխատանք են ծավալում հայարնակ վայրերում: Տրապիզոնում գործող Խորենյան բնթերցասրահը ևս պանդուխտ հայերին նախնական պիտելիքներ էր տալիս հայ ժողովրդի պատմության ու մշակույթի մասին: Հայկունին առաջիններից էր, որ ավարտելով այդ բնթերցասրահի անսխտամ «դասընթացը», մեկնում է Շահաթուրբախոս հայ գյուղը՝ լուսավորություն տարածելու: Յոթնամյա գործունեությունից հետո, Հայկունին փոխադրվում է Տրապիզոնի թաղամասերից մեկը. այնտեղ դարձնում հիմնադրում և սկսում է դասավանդել սույն այդ տարիներին իր գործունեությունն է սկսում ծավալել Վարադգատյան բնկերությունը, որի կազմակերպիչ Մկրտիչ Փորթուղալյանը 1875 թ. հատուկ նամակով խնդրում է Հայկունուն մի շարք հայաշատ վայրերում, այդ թվում նաև Տրապիզոնում, իշխյալ բնկերության մասնաճյուղերն ստեղծել: Հայկունին խսկուն մեկնում է Կ. Պոլիս՝ Փորթուղալյանի հետ ծանոթանալու և գործունեության ծրագիր մշակելու: Այնտեղ նա հանդիպումներ է ունենում մի շարք հայ խմբագիրների, գրողների ու հասարակական գործիչների հետ, ծանոթանում է նաև մեծ երգիծարան Հակոբ Պարոնյանի հետ: Այդ մտերմական զրույցներն ու մտքերի փոխանակությունները խոր տպավորություն են թողնում Հայկունու վրա: Անհրաժեշտ հանձնարարություններ ստանալով, նա վերադառնում է Տրապիզոն, որտեղ ստեղծում է նոր ուսումնարան և զբաղարան: Ապա նրան մենք տեսնում ենք վանի Ալյուր գյուղում, որտեղ զարձալ դարձնում է հիմնադրում: Այդ տարիներին հայ գյուղացիության ծանր փիճակի, թուրք վաճառքի կողմից կատարվող անմարդկային բռնությունների մասին մի շարք անստորագիր հոդվածներ է հրատարակում, որոնց համար և նա դատապարտվում է բանտարկության: Հասարակական կյանքի ու առօրյա անցուղարձերի մասին գրված այդ լրագրային բնույթի հակիրճ հոդվածներն առտիճանարար խրենց տեղը դիջում են ավելի ծավալուն ուսումնասիրությունների, որոնց բուն էությունը ժողովրդական կյանքն էր իր բազմազան ոլորտներով: Հայկունու արխիվում պահպանվում են նրա ծննդավայր Տրապիզոնի մասին, հավանաբար ծավալուն ուսումնասիրության միայն պատասխիկները, որոնք հիմնականում վերաբերում ևս տեղի ճարտարապետական կոթողների ներքին ու արտաքին նկարագրությանը: Հայկունին անդրադարձել է նաև իր ծննդավայրում օրենքի ուժ ստացած ժողովրդական մի շարք սովորույթներին, տոներին ու բնակչության լեզվա-բար-

2 ՀՍՍԽ ԳԱ գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

3 Տե՛ս «Արարատ», Պոլիս, 1876 թ. հոկտեմբերի 24-ի համարի մեջ Ս. Հայկունու անստորագիր հոդվածը, որի նախնական տարբերակը պահպանված է նրա արխիվում (տե՛ս ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107):

բառային առանձնահատկություններին⁴։ Հայկունին «Տրապիզոնի հայ գյուղացու կյանքը» ծավալուն ուսումնասիրության մեջ հանդամանորեն նկարագրում է ժողովրդական կենցաղի հետ կապված ամենարազմազան մանրամասներ։ Աշխարհագրական ու փիճակագրական մի շարք տվյալներ հաղորդելուց հետո հեղինակը նշում է. «Մենք այժմ պիտի ներկայացնենք Համշենի ու Սև Գետի կոստրածեն խույս տվող այն տոկուն, աշխատասեր ու շարքաշահյալ կյանքը, որոց մեջ ծնած, մեծացած և որոց աշխատանքին ևս մասնակցած եմ...»⁵։

Տրապիզոնի և նրա շրջակա գյուղերի մասին ավելի մանրամասն ու բազմակողմանի պատկերացում է տալիս 1905 թվականին էջմիածնում լույս տեսած «Հուսեփյի ազգատոհմ և տարօրինակ ավազակ Արրիեում Տրապիզոնի հայ գյուղերու մեջ 1795—1840 թթ.» գրքույկը։ Ուշագրավ վերնագիր կրող այդ գրվածքն իրենից ներկայացնում է ականատեսի հիշողություններ ու տպավորություններ, որոնք նա բաղել է իր շրջագոյությունների ընթացքում։ Այդ գրվածքում հեղինակին հաջողվել է գեղարվեստորեն վերարտադրել Տրապիզոնի մոտակա գյուղերում բռնի հավատափոխ դարձած հայերի տնտեսական ու հոգևոր ստրկական վիճակը։ Ուրեմն իր ժամանակի առաջավոր մտածող, Հայկունին կարողացել է ճիշտ մեկնաբանել «Ավազակ Արրիեումի» տարօրինակ կերպարը, ժողովրդական մի հերոս, որը հասարակական-քաղաքական վերահիշյալ պայմաններում պայքարելով ձգտում է նվաճել յուրաքանչյուրի անկախությունն ու ազատությունը։

1708—10 թթ. Տրապիզոնի շրջակայքում մուսուլման կնիշերիների ու մուլաների կողմից բռնի կերպով թուրքացված սեղևադիրների ողբերգական վիճակի գեղարվեստական վերարտադրությունն ենք գտնում Հայկունու «Սշխարհներ կուսած մոռացված հայեր.—Տրապիզոնի հայ մտհմետական գյուղերն ու նրանց ավանդությունները» գրվածքում։ Բռնության միջոցով ու սրով հավատափոխ էր դարձել հայ ժողովրդի այդ հատվածը։ Ազգագրագետի վկայությամբ կյանքի էմանորինակ դաժան պայմաններ էին ստեղծվել նաև Համշենում, որտեղ հայոց լեզուն թուրք մուլաների կողմից անարգված էր, հայերեն յոթ բառը մի հայհույություն էր նկատվում և սահմանվում էր տուրք՝ հինգ ուխտարի բանակով⁶։

Այսպիսով հասկանալի է դառնում, թե ինչու Հայկունին իր մանկավարժական գործունեության տրապիզոնյան շրջանում ազգագրական ու տեղագրական նյութերի հետ միասին զրի է առել նաև ժողովրդական բազմաթիվ հանելուկներ⁷, առածներ ու ստացվածքներ⁸, քանի որ ստիպողական հարկադրանքը հայ ժողովրդի այդ հատվածին աստիճանաբար մոռացնել էր տալիս նրա մայրենի լեզուն, հավատքն ու սովորույթները, նրա նահապետական, կենցաղի ինքնատիպությունը։ Հայկունին իր տրապիզոնյան ցիկլի գրվածքներում մանրամասն քննության է արժանացրել շրջակա գյուղերի ու գավառների ինչպես

4 Ս. Հայկունի, Տրապիզոնի Զեֆանոս, Կոստիկա հայ գյուղերից սովորություններն ու բարքերը, «Արարատ», էջմիածին, 1892, էջ 428—430։

5 «Արարատ», էջմիածին, 1905, էջ 757—758։

6 Տե՛ս նույն տեղում, 1895, էջ 297։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 83—84։

8 Տե՛ս նույն տեղում, էջ 54, 293։

աշխարհագրական, նույնպես և ձեռված ժողովուրդների քաղաքական-անտեսական ու հոգևոր կեղեքումը:

Սարգիս Հայկունու գրվածքների տրամադրոնյան այս շարքը նշանակալից իրադարձություն էր հայ հասարակական մտքի զարգացման ասուարեկում, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մինչ այդ մեր իրականության մեջ գրեթե ոչ ոք չէր անդրադարձել Տրամպլիդոնի ու նրա շրջակայքի ուսումնասիրությանը, եթե բացառենք 1892 թ. Եվրոպացի հետախույզ Այրերտ Գրվելի «Ուղևորություն ի փոքր Ասիա. Տրամպլիդոն ի Կարին» գրվածքը⁹, որը ճանապարհորդական տպավորություններից այն կողմ չէր անցնում:

1878 թ. Հայկունին առիթ է ունենում անձամբ ծանոթանալու հայ բանագիտության երախտավոր Գարեգին Արվանձտյանցի հետ, որը հետախույզական ճանապարհորդության էր դուրս եկել վերահասու լինելու արևմտահայության տնտեսական ու կրթական վիճակին: Արվանձտյանցն այցելում է նաև Հայկունու գլորոցը. մոտիկից ծանոթանում նրա կատարած աշխատանքներին, իր գոհունակությունը հայտնում և խորհուրդ է տալիս Հայկունուն հիմնադրապես զբաղվել ժողովրդական բանահյուսությամբ: Արվանձտյանցի քաջակրթանքը շատ է ոգևորում Հայկունուն, և այդ օգտաշատ հանդիպումը նշանակալից ազդեցություն է թողնում նրա վրա:

Այնուհետև, Հայկունու կյանքում սկսվում է դործունեության մի նոր փուլ, որը համընկնում է ուս-թուրքական պատերազմի (1877—78) իրադարձություններին և նրա հետ կապված ազգային-ազատագրական տրամադրություններին: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում հայաշատ մի շարք վայրերում ստեղծվում են գլորոցասեր ընկերություններ: 1879 թ. Կ. Պոլսում հիմնադրվում է Գլորոցասիրաց ընկերությունը, որը նպատակ ուներ Հայաստանի մի շարք վայրերում, այդ թվում նաև Այաշկերտում, գլորոցներ հիմնադրել: Այդ ընկերության հանձնարարությամբ Հայկունին ավագ ուսուցչի պաշտոնով առաքվում է Այաշկերտ: Այնտեղ նա մասնակցում է պատերազմից տուժածների համար կազմակերպված Սովկոյ հանձնաժողովի աշխատանքներին՝ բնական առ բնության շրջելով սնունդ, վառելիք, դեղորայք ու հագուստեղեն և բաժանում կարիքավորներին, սփռվում ու մխիթարում է գաղթականներին և միաժամանակ, որպես ակնառես, բազմաթիվ թղթակցություններ է գրում Կ. Պոլսի մի շարք պարբերականներին, մանրամասն նկարագրելով ժողովրդի վիճակը:

Հայկունին շուրջ տասը տարի աշխատում է Այաշկերտում: Այնտեղ նա գլորոց է հիմնադրում և իր մանկավարժական գործունեությամբ աճեցնում ու զաստիարակում է բազմաթիվ սաներ: Ժողովրդական ուսուցիչը ոչ մի ջանք չի խնայում լավագույն ձևով ուսուցանելու մայրենի լեզուն, հայ ժողովրդի պատմությունն ու աշխարհագրությունը, իսկ երեկոները անգրագետ մեծահասակներին ձրի գրաճանաչություն է սովորեցնում: Նա երեխաների համար գնում է հայ գրողների գրքեր՝ ստեղծելով գլորոցամերձ գրադարան:

Ուսուցման գլորոցական սիստեմը բնութանն ու ժամանակակից կյանքին ավելի մոտեցնելու նպատակով Հայկունին իր աշակերտներին, հայրենասիրական երգեր հնչեցնելով, առաջնորդում էր կիրակնօրյա զրոսանքներին: Հմուտ մանկավարժն այդպիսի միջոցառումներով նպատակ էր հետապնդում կոփել

⁹ Ճանոնես ամսօրյա», Վիեննա, 1892, N 1, էջ 71—75:

նրանց մարմինը, ապա ծանոթացնել հայրենի բնաշխարհին ու այդ բնության մեջ իր տիրույթ կյանքով ապրող ժողովրդի ծանր վիճակին: Իր կազմակերպած այդ շրջադաշտությունների ընթացքում Հայկունին օգտվելով առիթից տեղադրական, ազդագրական ու բանահյուսական նյութեր էր գրի առնում: Հայկունու գործերակերպի նմանօրինակ ուղղվածությունն անհատականալի ու խորթ էր տեղի խավարամիտ հոգևորականներին, որոնք նրան որպես քաղաքական անբարեհույսի մտարում են ուսուցչի պաշտոնից:

Այաղկերտում Հայկունին ինչպես իր մանկավարժական աշխատանքի ընթացքում, այնպես էլ գործադրությունների տարիներին շրջադաշտում է հայ գյուղերն ու ավանները, թափանցում ժողովրդի հոգու և մտքի խորքերը և ամենայն մանրամասնությամբ նկարագրում է տեղավայրն ու միջավայրը, հնադիտական նյութերն ու տնտեսական գոյավիճակը, կենցաղն ու սովորույթը և ժողովրդական իմաստալից խոսքն ու գրույցը: Այդ տարիներին Հայկունին անհրաժեշտ նյութեր է հավաքում իր «Բագրեանդ Զրարաշխ գափառ» ուսումնասիրության համար¹⁰: Հետազոտական հսկայական նյութ պարունակող այդ հավաքածուն ըստ հեղինակի «Ծագկանց մի կապուց է հավաքված հայրենյաց մի անկյունեն, Բագրեանդա լեռներեն ու դաշտերեն, սարերեն ու ձորերեն»¹¹: Հեղինակը գեղարվեստական գրողի վարպետությամբ, ընթերցողին իր հետ վերցնելով, շրջադաշտում է իր հայրենիքը: Աշխարհագրական միջավայրի բնդհանուր նկարագրի հետ միասին նա տալիս է ամեն մի լեռան, ժայռի, բերդի ու ճանապարհի, աղբյուրի ու լճակի անունները և նրանց հետ կապված ավանդությունները: Ընթերցողին մտովին փոխադրում է Բագրեանդի հայ գյուղացու տունը կամ քրդի վրանը, որտեղ ծերունիները պատմում են իրենց երկրի պատմությունը, որտեղ ամենայն մանրամասնությամբ կարելի է ակնատես դառնալ տեղի բնակչության նահապետական կենցաղին, նիստ ու կացին և դարերով սրբազոտված սովորույթներին: Սակայն այդ գեղեցիկ բնության պատկերների հաջորդում է հեղինակի ճակատագրական հարցադրումը. «Ընթերցող, բայց կարծեցիր, թե ա՛յս է կյանքը»: Եվ նա սկսում է նկարագրել այդ սքանչելի բնության զրկում իր տիրույթ և ողբերգական կյանքով ապրող հայության վիճակը: Թուրք կառավարության, բեկերի ու ենիչերիների հարստահարությունների, ավերի ու ավարի նկարագրությունները, որ կան գրքում, հստակ պատկերացում են տալիս Բագրեանդի հայության քաղաքական ու տնտեսական ծանր կացության մասին:

Դաժան ու անմարդկային ձևերով բնաջնջվում էր հայ ժողովուրդը, նահատակվում էր նա ֆիզիկապես ու բարոյապես, խողառ ոչնչանում էին նրա ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները: Ամաշացել էր հայրենի Բագրեվանդը, հանգել էր հյուրասեր օջախների ծուխը, հուտի: դաշտերում այլևս չէին երևում գործունյա մշակները, չէին հնչում նրանց հորովելն ու գութանի երգը, ձմռան գիշերներին այլևս օդաներում չէին հավաքվում հին-հին գրույցներ պատմելու համար, այլևս չէր զրնգում հարսանյաց դհոլն ու գուռնան: Ահա թե ինչու անհրաժեշտ էր անհապաղ գրիչը ձեռքն առնել և մանրամասն նկարագրել ժողովրդի անհետացող կենցաղն ու սովորույթները, արհեստներն ու զրադումը. ամեն, ամեն բան, ինչ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել

¹⁰ Լույս է տեսել էջմիածնում 1894 թվականին:

¹¹ «Բագրեանդ Զրարաշխ գափառ», 1894, էջ 56:

էր իր մեղմաջաճ եռանդով, հշուտ իր ինքնատիպ ու բաղձալիցմանի կյանքի հենքը:

Այդ բոլորն անհրաժեշտ էր հավաքել, ոչ միայն իսպառ կորստից փրկելու համար, այլև հենց հայ ժողովրդին ցույց տալու համար իր ուժն ու կարողությունը: Ժողովրդական արժեքների վերհանումով ինքնագիտակցության բերելու ժողովրդական զանգվածներին և համայն աշխարհին ցույց տալու, որ հայր ևս տաղանդավոր ու ստեղծագործ մի ժողովուրդ է, որն ունեցել է իր հարուստ անցյալը, բայց պարտավորված է ասլուկ տխուր ներկայով, ու այդ ժողովուրդն արժանի է հարգանքի ու նրա դատը պետք է պաշտպանել: Հայկունին իր հետադոտությունն սկսում է ազգագրական մի միավորի նկարագրությունից՝ հայկական մեծ գերդաստանից, որն իր մեջ խտացնում է ժամանակի հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր բնորոշ կողմերը: Ահա խոյի վաթսունհինգ հոգուց բաղկացած գերդաստանի կենցաղի մանրամասն նկարագրություն՝ և կամ հայ գյուղացու տնտեսության և նրա զբաղմունքի մասին մանրամասն պատկերացում են տալիս Հայկունու մի շարք այլ անտիպ գրքավածքները¹³: Ժողովրդական կենցաղին հետախույզ ազգագրագետը մեկ առ մեկ նկարագրում է հայ գյուղացու անասնապահության տարբեր ճյուղերը: Սակայն բազմաանդի հայ գյուղացու համար ամենակենսականը եղել է երկրագործությունը: Ամբողջ տարվա ընթացքում հողի հետ կապված աշխատանքների հատուկ ուսումնասիրությունը Հայկունին ավել է իր «Բույն» ծավալուն մենագրության մեջ: Ինչպես հեղինակն է նշել, այդ գրվածքը «Գրի է առնված Բաղրևադա իսկական բարբառով, մանրամասն նկարագրված Բաղրևադա հայ ժողովրդյան երկրագործական կյանքը, վար ու ցանքը, հունձն ու կալը, աղունն ու բնագունը և այլ ամեն սովորություններով»¹⁴: Ազգագրական տեսակետից բացառիկ հետաքրքրություն ներկայացնող այդ աշխատությունն անհետ կորել է իր հետ տանելով երկրագործական աշխատանքների կենդանի վերարտադրությունը:

Հայկունու ազգագրական նյութերի մեջ նշանակալից արժեք են ներկայացնում ժողովրդական հավատալիքները, բրնց զգալի մասը ամենայն խնամքով գրի է առել նրա զուսար Յրուսակը: Ս. Հայկունու արխիվում պահպանվում են շատ հավատալիքների նկարագրություններ, որոնցից առանձնապես ուշագրավ է «Շփոտ և Գոլվաթ»¹⁵ հավատալիքային վերապրուկը: Սա բնության և հասարակության չար ուժերի դեմ մարդու մղած պայքարի փոխաբերական պատկերումն է:

Հայկունու ազգագրական նյութերի մեջ հատուկ հետաքրքրության է արժանի «Սովորություն Արաշկերտի հայ ժողովրդյան հարսանյաց» ուսումնասիրությունը¹⁶: Այս անտիպ գրվածքը, հարսանեկան սովորույթի շրջանակներից դուրս գալով, ընթերցողին համակողմանի պատկերացում է տալիս Արաշկերտի հայության հասարակական հարաբերությունների մասին, այնտեղ բոլոր դեպքերն ու դեմքերն իրենց վերջնական լուծումն ուտանում են դասակարգային

¹² Տե՛ս «Արաշկերտի մեծ գերդաստանի մը շարունակությունը», ԳԱԹ, Հայկունու ֆոնդ, վազ. 72:

¹³ Տե՛ս նույն տեղում, վազ. 58—60:

¹⁴ Նույն տեղում, վազ. 71:

¹⁵ Տե՛ս «Արարատ», էջմիածին, 1895, 19 210—213:

¹⁶ Տե՛ս ԳԱԹ, Հայկունու ֆոնդ, վազ. 2:

հարարերությունների պայմաններում: Այս գրվածքում Հալկունին զեղարկատարեն պատկերել է երիտասարդների ամուսնությունն իր բոլոր սովորութիւն-համադրութիւն արտահայտութիւններով ու ծիսական երգերով, նույնպէս և ինամիական հարարերությունների մեջ ընդունված հյուրընկալութեան ձևերն ու եղանակները ընդհուպ մինչև հարսանեկան հանդեսի ընթացքում տեղի ունեցած թատերական ներկայացումներն ու խաղ-պարերի շարժումներն ու մեղեդիները, զգեստներն ու զարդերը:

Այլաշկերտում Հալկունու գրի առած նյութերը բաղմաթիւ ու բազմազան են եղել, սակայն զժրախտաբար նրանց մեծ մասը մնացել է հոգի մեջ թաղված, երբ նա 1890 թ. ճողովրդելով թուրքական կառավարութեան հետապնդմաներից անցնում է ուսական սահմանը երկար զեղերումներից հետո, նա ի վերջո ապաստանում է էջմիածնում: Սկսած 1893 թ. Հալկունին ասորում և աշխատում է էջմիածնում, սկզբում՝ որպէս ձեմարան ընդունվող պատանիների ուսուցիչ, իսկ այնուհետև՝ իբրև «Արարատ» ամսագրի սրբագրիչ¹⁷:

1893—95 թթ. կոտորածների ժամանակ հայաժողովականներից շատերն անցնում էին սահմանը և կոտակվում Մակուի շրջակա գյուղերում: Քաղցն ու համաճարակը ավերներ էին գործում: Հալկունին, որ այդ ժամանակ գտնվում էր Մակուում, օգնութիւն է կազմակերպում զաղթականներին: Հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեան նկատմամբ նրա մտահոգութիւնը դուրսկցվում է ժողովրդի հոգևոր դանձկրը պահպանելու և աւամհացելու ձգտումին: Այդ իսկ նպատակով նա այստեղ ևս զաղթականներից գրի է բռնում ազգագրական ու բանահյուսական բաղմաթիւ նմուշներ: Սակայն Հալկունու այդ բոլոր գոհոյութիւնները չեն դիմահատվում, կղերականների ևսարգաւանքի պատճառով նա ստիպված թողնում է աշխատանքը և վերադառնում էջմիածին: Այնտեղ ևս նա ինքնամոռաց կերպով աշխատում է. «Ամեն ինչ հանձնված գործ,—գրում է նա,—խղճի մտքը կատարած և՛, սակայն վանական կառավարութեան վերջին տարիներու մեջ նշանակված անդամները, որք հազար ու մի ստորաբարձ միջոցներով ձեռք ձգած են անդամութիւնը, այսպիսի անձինք ինչ կարող էին ձանաչել համատարիմն ու անհամատարիմը: Մինչև անգամ ինքզինքնին չէին ճանաչեր, ո՛ր մնաց զիս ձանաչելին: Արդեն այդ գիտելի ու չէի հոտար, որ ձանաչեն, դուրս համար իսկ ցամաքի զգար, միայն իմ խիղճը հոնդարտ է նորա համար, որ քրախրոյս ասորած և՛, վանքին ոչ մի վնաս չտալեն գատ օգտակար ևս եղած և՛ ընդմիջտ, իսկ պատարկապարտ կարգ մի վարդապետներու համար գործս առ ոչինչ, կերածս ձրիակերութիւն կհամարեին»¹⁸:

Էջմիածնում Հալկունու միակ սփոփանքը լինում է այն, որ նա հնարավորութիւն է ունենում «Արարատ» ամսագրի տարբեր համարներում, ինչպէս և առանձին գրքուկներով լույս բնծայել իր մի շարք գրվածքները, որոնք նա մինչ այդ գրի էր առել ու համաքել էր տարբեր վայրերում: Տեղագրական ու ազգագրական դանդաղան նյութերի հետ 1896 թ. առանձին գրքով լույս է տեսնում նաև «Մոբոս» ծավալուն վիպերգը: Ժողովրդական այս ստեղծագործութիւնը հայ բանագիտութեան մեջ առաջին անգամ Հալկունու միջոցով իր ձանաչումն է գտնում: Այդ ստեղծագործութիւնն ունի հայրենասիրական խոր

¹⁷ Նույն տեղում, գաղ. 107:

¹⁸ Նույն տեղում:

արմատներ, որոնք իրենց հնությամբ ձգվում են մինչև վաղ միջնադարը: Երկար տարիների քրտնաջան աշխատանքով գրի տոնված այդ բաղմազան նյութերի որոշ մասի հրատարակումը բավականին համարվ է բերում Հայկունուն, բայց ոչ մի օգուտ», գրում է նա իր ժամանակի մտավորականության իրավական վիճակն ընդգծելով: Եվ նա ստիպված 1898 թ. նամակ է գրում Մոսկվայի Հաղարչան ձեմարանի տեսուչ Գր. Խալաթյանին հայտնելով, որ ինքն ունի ազգագրական ու բանահյուսական տարրեր տեսակի անտիպ նյութեր. «Երբ վաճառեմ բաղմաթիվ են և մի ճյուղի շեն պատկանիր, այլ շատ մի դավաճարարությունով գրված գանազան նյութեր են և նրանցից մի մասը լավ աուդների բերանից առնելով հաջող դուրս բերած եմ, մասամբ ևս անհաջող»¹⁹: Այդ նամակին նա կցում է իր հավարած նյութերի ծավալուն ցուցակը: Գր. Խալաթյանին հիացմունք է պատճառում այդ անդնահատելի գանձը, և նա խոստանում է գրանց մի մասը լույս բնծալել էմինյան ազգագրական ժողովածուի առաջիկա հատորում: Ծայրահեղ չբավորության մեջ ապրող Հայկունին ոչ այնպե՛ս նյութակտոն ակնկալիքով, որքան ժողովրդի հոգևոր մշակույթը հավերժացնելու նպատակով, իր պատասխան նամակում գրում է. «Այս աչքիմ մեծ աշխատանքիս փոխարեն ձեր վարձատրությունը շատ աննշան է, և ես անշափ խոստապահանջ չեմ. եթե կարելի է, ինձ միայն հարյուր օրինակի արժեք արտադրություն տվեք, մյուս ինձ հասանելիք երկու հարյուր օրինակի արժեքը վճարեք. որով փոքր ինչ վիճակս ապահովեմ, դարձյալ Ձեզ համար նյութեր հավաքեմ, ավելի կանոնավոր ու կատարյալ, այլևայլ վայրեր ունեցած գրվածքներս կարողանամ բերել տալ: Եկե մաքուր շանցուցած շատ նյութեր կան մոռտ, սակայն ապրուստի համար աննշան ծառայությամբ պարապելով միջոց չունիմ գրիչ ձեռք առնելու»²⁰: Գր. Խալաթյանը ևս զգում է իր առաջարկած վարձատրության չնչին լինելը, սակայն, պատճառաբանելով ազատ դուրսների պակասը, նրան խորհուրդ է տալիս «Բազրեանդա սովորությունների մեջ առանձին և մանրամասն ուշադրություն դարձնել նույն գավառի իրավաբանական սովորությունների վրա», իր ծրագրի հարցերին համապատասխան «մի սովորի աշխատություն պատրաստել այդ նյութերի մասին, այն ժամանակ հնարավոր կլինի առաջարկված գումարի եռապատիկը ձեռք բերել այլ աղբյուրներից»²¹: Գր. Խալաթյանը համոզված էր, որ «Հայկունին ձեռնհաս է կատարելու այդ գործը, նկատի ունենալով, որ պահանջվում է հույս նյութ, իրական կյանքից վերցված ամփոփ տեղեկություններ, և ոչ թե գիտական և քննական հետազոտություն»²²:

Հայկունին ընդունում է այդ առաջարկը: Վանքի Ղրի այգու հսկիչի պաշտոնը կատարելու հետ միասին, տոն օրերին ու արձակուրդներին նա շրջագայում է գյուղերն ու ավանները, «թափանցում ժողովրդյան խավերու մեջ, պատահած դեպքերն իրեն օրինակ առատորեն առաջ բերում»²³: Երկար ու քրտնաջան աշխատանքով բաղմաթիվ նոր տվյալներ ավելացնելով, նա իր «նյութեր ժամանակակից սովորության իրավունքի» ստվար ուսումնասիրությունն ուղարկում է Մոսկվա:

¹⁹ Նույն տեղում, Գր. Խալաթյանի ֆոնդ, բաժին 5, վավ. 97և:

²⁰ Նույն տեղում, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 96:

²¹ Նույն տեղում, Գր. Խալաթյանի ֆոնդ, բաժին 5, վավ. 97դ:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

Ժողովրդական կյանքի, իրավունքի ու կենցաղի բաղմակողմանի վերադարձումը հանդիսացող այդ արժեքավոր ուսումնասիրությունը Հաղարյան ճեմարանի մասնագիտական դասարանների կողմից արժանանում է Քոնստանդան մրցանակի:

1901 թ. սկսում է Հայկունու գրի տուած բանահյուսական նյութերի պարբերական հրատարակությունը: Էմինյան կտակի տնօրեն Գր. Խալաթյանի հեռակա ղեկավարությամբ, էջմիածնում լույս է տեսնում Էմինյան ազգագրական ժողովածուի երկրորդ հատորը, որն ընդգրկում է տարբեր բարբառներով գրի առնված բաղմաթիվ հերթաթերեր ու «Սասունցի Գավիթ» էպոսի երկու տարբերակ Մոկաց բարբառով: Հատորի նյութերը կազմելու, խմբագրական, սրբագրության և նույնիսկ տպագրության հետ կապված գրեթե բոլոր աշխատանքները ծանրանում են անխնայ բանահավաքի վրա: Նա իր առօրյա զբաղմունքներից հետո, գիշերներ է լուսացնում, որպեսզի «Խալաթյանցի և այլ բանասերների առաջ ամօթով չմնա»²⁴, Լույս տեսած հատորին արձագանքող գրախոսությունները գովեստով են արտահայտվում «Հաղարյան ճեմարանի և ծերունու» (Ս. Հայկունու) հասցեին²⁵, իսկ Ստ. Մալխասյանցը գնահատում է այդ ժողովածուն որպես հայ բանավիտության նշանակալից երևույթներից մեկը²⁶: 1902 թ. լույս ընծայված Էմինյան ազգագրական ժողովածուի չորրորդ հատորը, զանազան բարբառներով գրի առնված շուրջ հիսուն հերթաթերերի հետ միասին, պարունակում էր նաև էպոսի Արարատյան և Շատախի պատումները, որոնք առանձնապես աչքի են ընկնում ազգագրական ու սովորույթային երանգավորումներով:

1904 թ. հրատարակ է գալիս Էմինյան ազգագրական ժողովածուի հինգերորդ հատորը: Հայ-քրդական վեպերի այդ արժեքավոր ժողովածուի նյութերը Հայկունին հավաքել էր հատուկ խնամքով: Նրա միջոցով զրանց գրառումներին էր մասնակցել նաև մեծ երաժշտագետ Կոմիտասը, որն ամենայն ճշգրտությամբ ձայնագրել էր քրդական ժողովրդական երգերի ինքնատիպ մեղեդիները: Կոմիտասյան նոտագրումները (Ս. Հայկունու կատարած թարգմանություններով հանդերձ) մեծապես բարձրացնում են այդ հատորի արժեքը, նրան տալով ոչ միայն բանագիտական ու լեզվական, այլև երաժշտագիտական նշանակություն:

1905 թ. ցարական ոստիկանությունը խուլարկություն է կատարում Հայկունու բնակարանում և այնտեղ հայտնաբերում «վտանգավոր փաստաթղթեր», որոնք առիթ են դառնում նրա իննամսյա բանտարկությանը: Բանտում եղած ժամանակ նրա աղջիկը՝ Արուսյակը, պատրաստում է Էմինյան ազգագրական ժողովածուի վեցերորդ հատորի նյութերը: Ընդամենը քսան տարեկան Արուսյակն արդեն կրթված ու զարգացած էր և որպես առաջավոր կին գտնում էր, որ «այդ մարդոց հավասար իրավունքներ ու գործեր ունենալու են կանայք սոցիալական խնդիրներու վրա»²⁷: Նա միաժամանակ նշում էր, որ «Հայ իգական սեռը քաջալերել չգիտեն այդ մարդիկ», ուստի առաջարկում էր «Չմեղադրել կանանց, որ ընտանեկան շորս պատից այն կողմ իրավունք չունին անցնելու

²⁴ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

²⁵ ՏԵՍ «Արարատ», էջմիածին, 1902, էջ 75—77:

²⁶ ՏԵՍ «Մշակ», Թիֆլիս, 1902, N 76:

²⁷ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 120:

և հետաքրքրվելու»²⁸։ Արուսյակն այդ ժամանակ արդեն քաղաքական եռանդուն դործունեություն էր ծավալում։ Նրա հիմնադրած կանանց կազմակերպությունները գերծում էին էջմիածնում, Քալինում, Եղվարդում, Ղրմզյուտում, Մաստարայում և այլ վայրերում։ Սոցիալ-դեմոկրատական գաղտնի գրականությունը Արուսյակի միջոցով տարածվում էր այդ վայրերում։ Այս բոլորի հետ միասին Արուսյակն օգնում էր նաև իր հոր աշխատանքներին։ Էջմիածինը, որ մինչ այդ փոքր-ինչ նպաստում էր անկախագեղարանահամարին, այլևս որպես անբարեհույս էր դիտվում նրան, և շատ ժամանակ չանցած Հայկունին արձակվում է «Արարատի» սրբազրիչի պաշտոնից՝ զրկվելով նաև չնչին թոշակից։

Աշխատանքից ու ապրուստի տարբերական պայմաններից զրկված ծերունին դարձյալ շարունակում է իր միտքարանքը ժողովրդի մեջ գանել։ Նա Արուսյակի հետ միասին շրջապատում է Էջմիածնի մոտակա գյուղերը՝ Էմինյան անկախական ժողովածուի վեցերորդ հատորի համար լրացուցիչ նյութեր հագնելու։ Արուսյակն ուղեկցում է հորը, սիրով ու նվիրվածությամբ մտնում գյուղական խճիթները, զրի առնում վիճակի ու սիրո բաղմամբով բառյակներ, հարսանիքի ու լալիքի երգեր, ինչպես նաև ժողովրդական անտոխապաշտություններ ու հավատալիքներ²⁹։

Թիֆլիսում լույս բնծալվող Ազգագրական հանդեսի նյութերին հետևող Արուսյակը, անվանի բանահավաք երվանդ Հալայանին գրած իր նամակում հայտնում է, որ ինքը, Սա. Զեյինսկու կազմած ծրագրի համաձայն, հավաքել է Բարերդի, Շիրակի, Վաղարշապատի և այլ վայրերի սովորություններն ու հավատալիքները, որոնք մի ամբողջություն են կազմելու «խոստովանում եմ, որ ես որպես սիրող եմ հավաքել,—գրում է նա,—ուչ մի գրամական օգնություն նկատի չեմ ունեցել, սակայն նյութական անձուկ գրությունից ստիպված այդ առաջարկությունը հանդգնում եմ անելու»³⁰,—ավելացնում է նա՝ իր ծերունի հորը նյութապես օգնելու հույսով։ Այդ միջոցին Հայկունին դժվարությամբ վերստացել էր սրբազրիչի պաշտոնը։ Երբ մասին գրում էր, «Թեև շատ դժվար էր յոթանասունամյա հասակին մեջ, աչքերս ես չէին ներեր, սակայն հացի խոզիր էր, շարունակեցի գիշերներն ես գործնով պարապել։ Թե՛ գրքիս նյութերը պիտի պատրաստեի, կարդալորեի, գրաշարի պիտի հանձնեի և բոլորագրությունը անեի, մյուս կողմեն ես տպարանի մեջ ապված ավետարանի, Մաշտոցի և Արարատի սրբազրույթամբ պարապելի, գիշեր եղած է՝ անքուն անցուցած եմ։ Այս ծանր բեռան տակ Արուսյակն ինձ կօգնեի, ծախքս դարձյալ շատ էր, տան հացը և ստեղծիքը շաղակելով տուն պիտի տանեի»³¹։

Գծյալությունն ամուսնական անբախտիկ կյանքից, կանանց ստրկական վիճակի պատճառով աշխատելու անհնարինությունը և իր սիրելի հորն օգնելու անկարողությունն Արուսյակին հասցնում են այն բանին, որ իր գոյությունն ավելորդ բևե համարելով նա 1905 թ. նոյեմբերի 2-ին ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին, սեղանի վրա թողնելով հետևյալ երկտողը. «...Ոչ որ մեղավոր չի կարող լինել այս պարագայում, բայց միայն ներկայումս տիրող անփույթ կրթական, հասարակական-սոցիալական թշվառ դրու-

²⁸ Նույն տեղում, վավ. 122։

²⁹ Նույն տեղում, վավ. 103։

³⁰ Տե՛ս «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, դիրք 12։

³¹ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107, էջ 78։

Սրան մեջ պիտի փնտրել չարիքը: Եւ շունեցաւ կորով կովելու և հաղթական դուրս դալու, սակայն ուրիշները թող համբերութիւն, կամքի ուժ գործ պնեն»³²:

Յոթանասունամյա ծերունու նյութական կարիքին ավելանում է նաեւ հոգեկան ծանր վիշտը: Սակայն բնութիւնից տոկուն, ուժեղ կամքի տեր Հաջկունին վշտի մեջ անդամ չի վհատւում և ստեղծագործ աշխատանքի մեջ է որոնում իր սփոփանքը: Նա Արուսեակի համարած նյութերն ուղարկում է Մոսկվա Գր. Խալաթյանին: Այդ գրառումների մի մասը տեղ են գտնում էմիւշյան ազգագրական ժողովածուի փեյերսըդ հատորում:

Այնուհետեւ 1907 թ. Հաջկունին հրատարակում է «Կենդանական փեյերսի ժողովրդական տոակների տառջին գրքուկը: Անխոնջ բանասերը միաժամանակ շարունակում է բազմազան գրառումներից դուրս գրած ազգագրական, կենցաղային և այլ բնույթի շուրջ տասը հազար բառի մեկնաբանման աշխատանքները: Այդ ստվարածափալ բառարանը՝ մինչ այդ չմեկնաբանված բառիմաստների մանրակրկիտ բացատրութեամբ, նշանակալից երևույթ է ոչ միայն հայ բանագիտութեան, ազգագրութեան, տեղագրութեան ու արհեստագործութեան աստղարկում, այլև՝ այնպիսի բնագավառների համար, ինչպիսին են բանաստեղծութունն ու կենդանաբանութունը:

Իստեր մահից հետո անխնամ մնացած Հաջկունին, վշտից և նյութական կարիքից հարկադրված, դիմում է կաթողիկոսին, որպեսզի մի առ ժամանակ վանքի հացատան մեջ սնտոսպարվի: «Սակայն վանքեն պետք եղած խնամքը չեմ ստացած,—գրում է գառնացած ծերունին,—բացի ուտելիք տփուր կերակուրէն: Չմտան ցլտեն սնտոսպարվելու որեւէ միջոց շունենալով սարսափելի տանջանքների մատնված եմ»³³: Կյանքի այդպիսի ծանր պայմաններում 1908 թ. Սարգիս Հաջկունին վախճանվում է՝ իրեն բնորոշ առնամ հացնելով իր համարած ժողովրդական նյութերով:

Սարգիս Հաջկունին տարեց ու ճաշակեց արեւմտահայ առաջափոր մտաւորականութեան անապաճով կյանքի բոլոր դրոշմութիւնները: Մանկուց որդ, տնեորների դռներին մշտե, անդրապետ Հաջկունին, գերադանցապես ինքնակրթութեամբ, դարձավ 70—90-ական իմականների արեւմտահայ գաղառական գարոցների օրինակելի ժողովրդական ուսուցիչ, հասարակական գործիչ և հայտնի բանահավաք ու ազգագրագետ: Նա ժողովրդական գանգվածների բնգերքում գտավ իր կյանքի իմաստը, անդադար հավաքելով նրանցից հազարամյակների բնթացքում կուտակված ժողովրդական իմաստուն ստեղծագործութեան մարդարիտները և նկարագրելով նրանց անուրախ նիւտ ու կացը: Ս. Հաջկունու կյանքի ու գործունեութեան մանրամասն ու բազմակողմանի փերհատմն անհրաժեշտ է ոչ միայն արժեքաւորելու նրա խոշոր փաստակը, այլև ամբողջացնելու համար գեոեո րոտ արժանւոյն շուտումնասիրված հայ բանագիտութեան սնտոմութիւնը:

³² Նույն տեղում:

³³ Տե՛ս նույն տեղում, վավ. 1:

³⁴ Նույն տեղում, վավ. 107, էջ 49:

ЖИЗНЬ САРКИСА АЙКУНИ

В. Г. СВАЗЛЯН

(Р е з ю м е)

Средневековые армянские историки и поэты отчасти довели до нас ценные образцы армянского фольклора, однако в этой области особенно велика заслуга армянских фольклористов второй половины XIX в. Многие из них посвятили себя благородному делу собирания и записи духовных сокровищ своего народа. Одним из таких неутомимых тружеников является общественный деятель, педагог, этнограф-фольклорист Саркис Айкуни (1838—1908), который, будучи выходцем из народа, остался верен ему до конца.

Айкуни проделал огромную работу по просвещению народных масс. Будучи непосредственно связан с передовыми мыслителями Константинополя, он основывает армянские школы в Трапезунте, Ване, Алашкерте и в других местностях. Всюду он изучает и описывает быт и обычаи своего народа. Из этнографических исследований Айкуни значительными являются неопубликованное «Обычное право армянского народа», а также многочисленные этнографические исследования об армянах Багреванда, Гамшена, Сев-геда, Дерсима и т. д., в свое время опубликованные как отдельной книгой, так и в периодических изданиях («Арабат» и др.).

Велики заслуги Айкуни в области записи образцов армянского народного творчества. В течение всей своей многолетней деятельности он записывал не только армянский фольклор, но и песни курдского народа, к изучению которых он привлек внимание гениального армянского композитора Комитаса. В четырех томах (II, IV, V и VI) Эминских этнографических изданий опубликованы материалы (записанные на местных наречиях сказки, песни, загадки, пословицы и поговорки, сказания и заклинания), собранные самим Айкуни. Ему же принадлежат записи вариантов армянского народного эпоса «Давид Сасунский» на мокском, шатахском и араратском диалектах. Он первым издал самобытный армянский народный эпос «Мокос», а также многочисленные народные басни, вышедшие отдельной книгой в 1907 г.